ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 75-Ա**

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հաստատել Հայսատանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Զրարբի համայնքի
ավագանու 2019 թվականի
դեկտեմբերի 13 -ի N 75 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

Թիվ 12 արտահերթ նիստի ժամը 17:00

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

2. 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ , ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ , ԵՎ ԶՐԱՐԲԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N59-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ; Զեկ: Ղ. Ղազարյան

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Զեկ.Ղ.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 76-Ա

## 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ՋՐԱՐԲԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ և 28-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի *2020 թվականի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի,* <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> և <<Ջրարբի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1, N2 և N3 հավելվածների:

2. Ջրարբի համայնքի ղեկավարի՝ Ջրարբի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով

դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Ուժը կորցրած ճանաչել Ջրարբի համայնքի ավագանու 2018թվականի նոյեմբերի 26-ի <<2019 թվականի Ջրարբի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, Ջրարբի համայնքի մանկապարտեզ և Ջրարբի մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N57-Ա որոշումը և հավելված N1-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջրարբի համայնքի համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկում, համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/ պ՝** **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

Հավելված 1

Ջրաբերի համայնքի

ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 13-ի

թիվ 76-Ա որոշման

ՋՐԱԲԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը-8

2.Հաստիքացուցակը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | Դրույքը | 2020թ.-ին հաստատված դրույքաչափը |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 270000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 158000 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 193000 |
| 4 | Գլխավոր մասնագետ | 2.3-2 | 1 | 169000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 168000 |
| 6 | Առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 136000 |
| 7 | Պահակ | | 1 | 92618 |
| 8 | Հավաքարար | | 1 | 92618 |
| | Ընդամենը | | 8 | 1279236 |

Համայնքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Վարդանյան

Հավելված 2

Ջրարբի համայնքի

ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 13-ի

թիվ 76-Ա որոշման

ՋՐԱՐԲԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

<<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

1.Աշխատակիցների քանակը-13

2.Հաստիքացուցակը՝

| Հ/Հ | Պաշտոնիանվանումը | Պաշտոնիծածկագիրը | Դրույքը | 2020թ.-ին հաստատված դրույքաչափը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | | 1 | 100000 |
| 2 | Հաշվապահ | | 0.5 | 45000 |
| 3 | Տնտեսվար | | 0.5 | 45000 |
| 4 | Բուժքույր | | 0.5 | 45000 |
| 5 | Դաստիարակ | | 0.56 | 57500 |
| 6 | Դաստիարակ | | 0.56 | 57500 |
| 7 | Դաստիարակ | | 0.56 | 57500 |
| 8 | Դաստիարակ | | 0.56 | 57500 |
| 9 | Դայակ | | 1 | 92618 |
| 10 | Դայակ | | 1 | 92618 |
| 11 | Խոհարար | | 1 | 92618 |
| 12 | Խոհարարի օգնական | | 0.5 | 46309 |
| 13 | Պահակ | | 1 | 92618 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 9.24 | 881781 |

Համայնքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Վարդանյան

Հավելված 3

Ջրարբի համայնքի

ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 13-ի

թիվ 76-Ա որոշման

<Ջրարբի համայնքի մշակույթի տուն>>ՀՈԱԿ

1.Աշխատակիցների քանակը-2

2.Հաստիքացուցակը՝

| Հ/Հ | Պաշտոնիանվանումը | Պաշտոնիծածկագիրը | Դրույքը | 2019թ.-ին հաստատվածդրույքա չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | | 1 | 72752 |
| 2 | Հավաքարար | | 0.5 | 36800 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 1.5 | 109552 |

Համայնքապետարանի

աշխատակազմիքարտուղար՝ Վ. Վարդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

**13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 77-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 10.12.2019թվականի N17/27.3/28778-19գրությունը և պետական փորձագիտական եզրակացությունը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 2020թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 49686.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 49686.0 հազար դրամ, դեֆիցիտ ( պակասորդ)0.0 դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտա-տեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման ՝ համաձայն հատված 2-ի:

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակար գման՝ համաձայն հատված 3-ի:

5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը/պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի/ պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի պգտագործման ուղղությունները համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի 2018թվական եկամուտների և ծախսերի կատարողականը, 2019 բյուջեի հաստատված եկամուտներն ու ծախսերը և 2020թվականի բյուջեի եկամուտների կանխատեսումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

**13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 78-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 59-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 05.12.2019թվականի N17/27.3/28384-19 գրությունը, պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի գյուղական համայնքի ավագանու 2018թվականի նոյեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N59-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը,

1) Տեղական վճար, որպես ծնողական վճար ավելացնել 1300,0 հազար դրամով և նախատեսել ծախս.

2) Փոխադրամիջոցի գույքահարկ ավելացնել 350,0 հազար դրամով և նախատեսել ծախս.

ա. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4239 հոդվածը պակասեցնել 250.0 հազար դրամով.

բ. 04 բաժնի 2-րդ խմբի 1-ին դասի 4111 հոդվածը պակասեցնել 58.0 հազար դրամով.

գ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 261 հոդվածը պակասեցնել 100.0 հազար դրամով.

դ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4232 հոդվածը պակասեցնել 163.6 հազար դրամով.

ե. 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի 4511 հոդվածը պակասեցնել 246.0 հազար դրամով.

զ.01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4251 հոդվածը պակասեցնել 100.0 հազար դրամով.

է.01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածը պակասեցնել 1800.0 հազար դրամով.

ը.01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4241 հոդվածը պակասեցնել 20.0 հազար դրամով.

թ.01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4822 հոդվածը պակասեցնել 50.0 հազար դրամով.

ժ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4823 հոդվածը պակասեցնել 70.0 հազար դրամով.

ժա. 05 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 հոդվածը պակասեցնել 120.0 հազար դրամով.

ժբ. 06 բաժնի 4-րդ խմբի 1-ին դասի 4269 հոդվածը պակասեցնել 120.0 հազար դրամով.

ժգ. 08 բաժնի 3-րդ խմբի 2-րդ դասի 4234 հոդվածը պակասեցնել 45.0 հազար դրամով.

ժդ. 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4511 հոդվածն ավելացնել 2301.6 հազար դրամով.

ժե. 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4729 հոդվածն ավելացնել 170.0 հազար դրամով.

ժզ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4237 հոդվածն ավելացնել 450.0 հազար դրամով.

ժէ. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4112 հոդվածն ավելացնել 826.0 հազար դրամով.

ժը. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածն ավելացնել 00.0 հազար դրամով.

ժթ. 08 բաժնի 2-րդ խմբի 4-րդ դասի 4239 հոդվածն ավելացնել 65.0 հազար դրամով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 79-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի կողմից 2020 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի :

2.Հաստատել <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և կիրառվող զեղչերի չափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել <<Ջրարբի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և կիրառվող զեղչերի չափերը՝ համաձայն N3 հավելվածի:

4.Հաստատել Ջրարբի համայնքի 2020թվականին համայնքապետարանի կողմից
աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն N4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
N 79- Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու դեպքում սահմանել 5000 (հինգ հազար) դրամ ծառայության վճար :

2. Համայնքի բնակիչ համարվող անձանց լիազորագրեր տալու դիմաց ծառայությունների վճարը սահմանել`

1) տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար` 5000 (հինգ հազար) դրամ.

2) աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու համար` 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ.

3) նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների` բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու համար` 3500 (երեք հազար հինգ հարյուր):

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
N 79- Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԶԵՂՉԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի «Ջրարբի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 7000 ( յոթ հազար ) դրամ.

1) համայնքում հաշվառում չունեցող, այլ համայնքներից հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 9500 (ինը հազար հինգ հարյուր) դրամ:

ա) համայնքում հաշվառում չունեցող, այլ համայնքներից հաճախող միևնույն ընտանիքից երկու երեխա հաճախելու դեպքում սահմանել զեղչ ՝ յուրաքանչյուր երեխայի համար 1000 / մեկ հազար/ դրամ.

2. Սահմանել վարձավճարի զեղչ 50 %-ի չափով՝ հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երեք և ավելի երեխա մանկապարտեզ հաճախելու դեպքում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.

2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար.

3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից :

ՀԱՎԵԼՎԱԾ N3
ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
N 79- Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋՐԱՐԲԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԶԵՂՉԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի «Ջրարբիի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից կազմակերպվող շախմատի պարապմունքների հաճախող երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ:

2. Սահմանել վարձավճարի զեղչ 50 %-ի չափով՝ հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երեք և ավելի երեխա շախմատի պարապմունքներին հաճախելու դեպքում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.

2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար :

3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 80-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2020թվականի համայնքի բյուջեով նախատեսված 4213 <<Կոմունալ ծառայություններ>> հոդվածից 995000/ ինը հարյուր իննսունինը հազար/ դրամ գումար հատկացնել Ջրարբի համայնքում 2020թվականի ընթացքում աղբահանման աշխատանքներ իրականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 81-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. 2020թվականի համայնքի բյուջեով նախատեսված գյուղատնտեսության 4111 <<Աշխատավարձի>> հոդվածից 500000/ հինգ հարյուր հազար/ դրամ գումար հատկացնել Ջրարբի համայնքում 2020 թվականի ընթացքում անասնաբուժական ծառայություններ իրականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** ԱՐՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ